

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Գյուղատնտեսական համատարած հաշվառում
0.2	Ոլորտը	Գյուղատնտեսություն
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Գյուղատնտեսության և պարենային ապահովության վիճակագրության բաժին Բաժնի պետ Արսեն Ավագյան Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս՝ 374 11 52 44 49/374 11 56 46 72 Էլ. փոստ՝ arsav@armstat.am , info@armstat.am
0.4	Նպատակը և պատմությունը	<p>Հայաստանի Հանրապետությունում ԳՀՀ անցկացվել է 2014 թվականի հոկտեմբերի 11-31-ը ներառյալ: ՀՀ-ում ԳՀՀ անցկացվել է առաջին անգամ և համաձայն ՀՀ ԳՀՀ Օրենքի այն պետք է իրականացվի տասը տարին մեկ:</p> <p>ԳՀՀ անցկացման նպատակն է՝</p> <ul style="list-style-type: none"> • գյուղատնտեսության կառուցվածքի՝ գյուղատնտեսական նշանակության հողեր, գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակ, գյուղատնտեսական տեխնիկա, գյուղատնտեսական նշանակության շինություններ, առկա ներուժի՝ մարդկային, նյութական և դրա օգտագործման վերաբերյալ տեղեկատվության հավաքումը՝ հանրապետության, մարզային և համայնքային կտրվածքով • գյուղատնտեսության վերաբերյալ վիճակագրական տվյալների հաշվառման ամբողջական համակարգի ձևավորումը, • գյուղատնտեսությամբ զբաղվող անհատական (գյուղաբնակ և քաղաքաբնակ) տնային տնտեսությունների վիճակագրական ռեգիստրի ձևավորումը, • միջազգային վիճակագրական տվյալների հետ համադրելիության ապահովումը:
0.5	Օգտագործողները և կիրառումը	<p>Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն:</p> <p>ԳՀՀ իրականացման արդյունքում հավաքված վիճակագրական</p>

		<p>տվյալները օգտագործվում են դիտագննումային (մոնիթորինգային) ցուցանիշների համակարգերի ձևավորման համար՝ աղքատության դիտագննում, պարենային անվտանգության դիտագննում, գյուղատնտեսության ծրագրավորում և այդ ոլորտում քաղաքականության մշակում, ըստ սեռային բաժանման վիճակագրության վարում, ընթացիկ վիճակագրության որակի բարելավում, օգտագործողներին առավել ընդգրկուն տեղեկատվության տրամադրում և այլն: ԳՀՀ-ով հավաքված վիճակագրական տվյալները հնարավորություն են ընձեռում բարելավել գյուղատնտեսության ոլորտի ընթացիկ վիճակագրությունը, ձևավորել գյուղատնտեսության վերաբերյալ վիճակագրական տվյալների ամբողջական համակարգ, ձևավորել գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների վիճակագրական ռեգիստրներ, կատարելագործել վիճակագրության ընտրանքային գործիքները և ապահովել դրանց համապատասխանությունը գործող միջազգային չափանիշներին և չափորոշիչներին, բացահայտել գյուղատնտեսության ենթակառուցվածքների փոփոխությունների միտումները, հստակեցնել գյուղատնտեսության, որպես ձեռնարկատիրության (տնտեսական գործունեության տեսակի) առավել մանրամասն կազմն ու կառուցվածքը:</p> <p>ԳՀՀ միջոցով հավաքված տեղեկատվությունը իր կիրառությունը կգտնի այնպիսի գործընթացներում ինչպիսիք են գյուղատնտեսության բնագավառում ռազմավարությունների մշակումը, մարտավարական խնդիրների լուծումը, բիզնես միջավայրի վերլուծությունը, ոլորտի զարգացման միտումների բացահայտումը և այլն:</p>
0.6	Տեղեկությունների աղբյուրները	<p>Հայաստանի Հանրապետությունում ԳՀՀ միավորները հանդիսացել են՝ անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունները, գյուղատնտեսությամբ զբաղվող քաղաքաբնակների անհատական տնտեսությունները, այգեգործական ընկերակցությունների 17 անդամների անհատական տնտեսությունները, համայնքները, գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, խմբային տնտեսությունները:</p>
0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	<p>Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» և «ՀՀ վիճակագրական հնգամյա ծրագրի մասին» ՀՀ օրենքների, ինչպես նաև «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ընդունվել է 27.11.2008թ.), Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների (2013 թվականի ապրիլի 25-ի թիվ 402-Ն և 2013 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 1054-Ն) և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի</p>

		որոշումների և իրավական այլ ակտերի հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:
1 Բովանդակություն		
1.1	Բովանդակության նկարագիրը	Գյուղատնտեսական համատարած հաշվառումն (ԳՀՀ) իրենից ներկայացնում է գյուղատնտեսության կառուցվածքի վերաբերյալ համընդգրկուն տվյալների՝ <i>գյուղատնտեսական նշանակության հողերի, անասնազրկաքանակի, գյուղատնտեսական տեխնիկայի և գյուղատնտեսական նշանակության շինությունների, առկա ներուժի (մարդկային, նյութական)</i> և դրանց օգտագործման վերաբերյալ վիճակագրական գործառույթ (հավաքում, մշակում և տարածում): Հավաքված ցուցանիշներն ընդգրկում են տեղեկատվություն գյուղատնտեսական նշանակության հողերի (վարելահողեր, բազմամյա տնկարկներ, խոտհարքներ, արոտավայրեր) տնամերձ հողերի, ինչպես նաև գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունների, փաստացի ոռոգված հողերի, բույսերի պաշտպանության միջոցների և պարարտանյութերի, գյուղատնտեսական կենդանիների, գյուղատնտեսական նշանակության շենք շինությունների, տեխնիկական միջոցների և սարքավորումների, աշխատուժի, գյուղատնտեսական արտադրանքի օգտագործման ուղղությունների և դրա վերամշակման, ագրոտորիզմի, վարկերի և սուբսիդիաների, գյուղատնտեսական կոոպերացիայի և այլնի վերաբերյալ:
1.2	Վիճակագրական հասկացություններ	Իրավաբանական անձի կարգավիճակով տնտեսություններ- ներառում է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին: Իրավաբանական անձ- կազմակերպություն, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Անհատ ձեռնարկատեր- ֆիզիկական անձ, որն իրավունք ունի առանց իրավաբանական անձ կազմավորելու, ինքնուրույն, իր անունից և իր ռիսկով իրականացնել գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ (եկամուտ) ստանալն է: Ֆիզիկական անձի կարգավիճակով տնտեսություններ- ներառում է անհատական տնային տնտեսություններ և այգեգործական ընկերակցությունների անդամների անհատական տնտեսություններ:

		<p>Անհատական տնային տնտեսություններ-տնային տնտեսության շրջանակում (սահմանում) գյուղաբնակ և քաղաքաբնակ քաղաքացիների միավորում, որոնք կապված են միմյանց հետ ընտանեկան և/կամ այլ կապերով, ունեն ընդհանուր սեփականություն և զբաղվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ, վերամշակմամբ, պահպանմամբ, տեղափոխմամբ, իրացմամբ և այլն:</p> <p>Այգեգործական ընկերակցությունների անդամների անհատական տնտեսություններ- ֆիզիկական անձանց հասարակական միավորումներ, որոնք անհատական այգեգործական տնտեսության շրջանակում զբաղվում են գյուղատնտեսական արտադրանքի րտադրությամբ, վերամշակմամբ, պահպանմամբ, տեղափոխմամբ, իրացմամբ և այլն:</p> <p>Գյուղատնտեսական նշանակության հողեր- գյուղատնտեսական արտադրանքի արտադրության համար օգտագործվող հողեր: Գյուղատնտեսական նշանակության հողերն ըստ հողատեսքերի բաժանվում են վարելահողերի, բազմամյա տնկարկների, խոտհարքների, արոտավայրերի, ինչպես նաև տնամերձ հողերի այն հատվածի, որոնք օգտագործվում են գյուղատնտեսական նպատակով:</p> <p>Վարելահող-գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերի տակ կանոնավոր մշակվող և օգտագործվող հողեր, ներառյալ ցելեր:</p> <p>Բազմամյա տնկարկներ- պտղատու այգիների և հատապտղանոցների ու խաղողի այգիների տակ գտնվող հողեր:</p> <p>Պտղատու այգի և հատապտղանոց-պտղատու այգիների և հատապտղանոցների տակ գտնվող հողեր, անկախ այն հանգամանքից թե՛ դրանք նոր են հիմնված, թե գտնվում են բերքատու հասակում, ինչպես նաև պտղի և հատապտղի տնկարանների տարածություններ:</p> <p>Խաղողի այգի-խաղողանոցների տակ գտնվող հողեր, անկախ այն հանգամանքից թե՛ դրանք նոր են հիմնված, թե գտնվում են բերքատու հասակում, ինչպես նաև խաղողի վազերի տնկարանների տարածություններ:</p> <p>Խոտհարք-կանոնավոր խոտհնձի համար օգտագործվող հողեր:</p> <p>Այլ հողեր-գյուղատնտեսական նպատակների համար նախատեսված, սակայն դեռևս գյուղատնտեսական արտադրության մեջ չօգտագործվող հողեր՝ աղուտներ, ավազուտներ, ձորեր, ձորակներ, քարքարոտ տարածություններ, ինչպես նաև դաշտամիջյան ճանապարհներ և այլն:</p> <p>Ոռոգվող հողեր-հողեր, որոնք ունեն ոռոգման ցանց, անկախ այն հանգամանքից թե՛ այն գործում է, թե ոչ, և հողերը ոռոգվել են, թե ոչ:</p> <p>Փաստացի ոռոգված տարածություններ-տարածություններ, որոնք փաստացի ոռոգվել են որևէ ոռոգման աղբյուրից և ոռոգման որևէ մեթոդով:</p>
--	--	--

		<p>Հողերի ոռոգման աղբյուրներ- ընդհանուր ոռոգման ցանցեր, գետեր, լճեր, առուներ, խորքային հորեր (արտեզյան ջրեր), ինչպես նաև խմելու ջուր և այլն:</p> <p>Հողերի ոռոգման մեթոդներ- ակոսային (մարգերի մեջ ջրով լցված ակոսների միջոցով), արհեստական անձրևացում (հատուկ սարքավորումների միջոցով ոռոգում բարձր ճնշման տակ՝ անձրևի տեսքով), կաթիլային (մշակաբույսերի ոռոգում բույսի վրա ջրի կաթեցման միջոցով):</p> <p>Տնամերձ հողեր- տնտեսությանը (ընտանիքին) բնակավայրի վարչական տարածքում բնակության համար սեփականության իրավունքով կամ օգտագործման այլ ձևերով հատկացված հողեր:</p> <p>Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածություններ- վարելահողի վրա, պտղատու այգիների ու խաղողանոցների միջշարքային տարածություններում և տնամերձ հողերում բոլոր տեսակի գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման նպատակով փաստացի կատարված ցանքի, ներառյալ կրկնակի ցանքի և ենթացանքի տարածություններ:</p> <p>Աշնանացան մշակաբույսերի ցանքատարածություններ- տարածություններ, որոնք ցանվել են աշնանը և պահպանվել են մինչև գարնանացան մշակաբույսերի ցանքի ավարտը՝ առանց ոչնչացած տարածությունների:</p> <p>Կրկնակի ցանք- հիմնական մշակաբույսի բերքահավաքից հետո նույն տարածության վրա այլ մշակաբույսերի ցանքն է, որի նպատակն է միննույն տարածությունից մեկից ավելի անգամ բերք ստանալը:</p> <p>Ենթացանք- նույն հողակտորում միաժամանակ մեկից ավելի գյուղատնտեսական մշակաբույսերի խառը ցանք:</p> <p>Ցել- վարելահող, որը ներառում է սև, մաքուր, սիդերալ և կուլիսային ցելեր:</p> <p>Սև ցել- հողատարածություններ, որոնք հերկվել են նախորդ տարվա աշնանը և ցանքերի եզրափակիչ հաշվառման պահին զբաղեցված չեն գարնանացան մշակաբույսերի ցանքերով:</p> <p>Մաքուր ցել- հողատարածություններ, որոնք հերկվել են գարնանը և մինչև աշնանացան պահպանվել են չօգտագործված անմշակ) վիճակում:</p> <p>Միդերալ ցել- հողատարածություններ, որոնց վրա ցանվել է հատիկարնդեղենային մշակաբույսեր, որը կանաչ վիճակում հերկվել է հողն օրգանական նյութերով հարստացնելու համար:</p> <p>Կուլիսային ցել- հողատարածություններ, որոնց վրա կատարվել է բարձրացողուն մշակաբույսերի ցանք՝ ձմռանը դաշտում ձյուն կուտակելու նպատակով:</p> <p>Ջերմոցներ- փոքրածավալ կառույցներ, որոնք ունեն շարժական ծածկեր (շրջանակներ՝ ապակեպատ կամ թաղանթապատ), չեն ջեռուցվում, շահագործվում են գարնանը, ամռանը և աշնանը, որոնցում աճեցվում են բանջարանոցային մշակաբույսեր, ծաղիկներ,</p>
--	--	---

		<p>սածիլներ և այլն:</p> <p>Ջերմատներ- տարբեր չափերի կառույցներ, որոնք հազեցած են ջերմատնային կոնստրուկցիաներով և սարքավորումներով, ջեռուցվում են և հնարավորություն են տալիս ողջ տարվա ընթացքում զբաղվել բուսաբուծական արտադրանքի արտադրությամբ (աճեցնել բանջարանոցային մշակաբույսեր, ծաղիկներ, սածիլներ և այլն):</p> <p>Մականոց- տարածություններ (հատուկ սարքավորված շինություններում, նկուղներում և այլն) սունկ աճեցնելու համար:</p> <p>Տնկարան պտղի, հատապտղի, խաղողի և դեկորատիվ ծառերի- անկախ տեսակից ու սորտից տնկիներ, վազեր, սածիլներ և դեկորատիվ ծառերի տնկանյութ աճեցնելու նպատակով օգտագործվող հողատարածություն:</p> <p>Խաղողի տեխնիկական սորտեր- այն խաղողն է, որը նախատեսված է վերամշակման համար՝ Ռքածիթելի, Կանգուն, Արենի, Մեղրաբույր, Բանանց, Ոսկեհատ, Հաղթանակ, Գառան դմակ և այլն:</p> <p>Խաղողի սեղանի սորտեր- այն խաղողն է, որը նախատեսված է սննդի (պարենի) նպատակով օգտագործման համար. Շահումյան, Կարդինալ, Երևան, Հայաստան, Արարատ, Հայրենիք և այլն:</p> <p>Խաղողի ունիվերսալ սորտեր- այն խաղողն է, որը նախատեսված է թե՛ սննդի (պարենի) և թե՛ վերամշակման համար. Կախեթ, Անահիտ, Մսխալի, Վան և այլն :</p> <p>Բուժանյութեր և թունաքիմիկատներ- ներառում են հերբիցիդներ, ինսեկտիցիդներ, ֆունգիցիդներ:</p> <p>Հերբիցիդներ- քիմիական նյութեր, որոնք օգտագործվում են մոլախոտերի դեմ պայքարի համար:</p> <p>Ինսեկտիցիդներ- քիմիական նյութեր, որոնք նախատեսված են վնասակար միջատների, որդերի՝ դրանց թրթուրների ու ձվերի ոչնչացման համար:</p> <p>Ֆունգիցիդներ- քիմիական նյութեր, որոնք նախատեսված են տարբեր տեսակի հիվանդություններ հարուցող սնկերի, բակտերիաների, սպորների և այլնի զարգացման կանխման և ոչնչացման համար, բույսերի կենսաբանական պաշտպանության միջոցներ՝ կենսաբանական մարմիններ, որոնք իրենց գործունեության ընթացքում ձևավորում են այնպիսի կայուն կենսաբանական միջավայր, որը միտված է գյուղատնտեսական մշակաբույսերի համար առավել նպաստավոր (վնասատուներից զերծ) զարգացմանը:</p> <p>Բույսերի պաշտպանության կենսաբանական միջոցներ- բույսերի վնասակար օրգանիզմների կանխարգելման, դրանց դեմ պայքարի և վերացման համար կիրառվող կենսաբանական միջոցներ (միջատներ, սնկեր, բացիլներ, ֆերոմոնային թակարդներ և այլն):</p> <p>Հանքային պարարտանյութեր- ազոտական՝ ամոնիակային սելիտրա, կարբամիդ և այլն, ֆոսֆորական, կալիական, կոմբինացված՝ նիտրոամոֆոսկա, ամոֆոս և այլ պարարտանյութեր:</p> <p>Օրգանական պարարտանյութեր- բոլոր տեսակի կենդանիների և</p>
--	--	---

		<p>թռչունների գոմադր, ինչպես նաև օրգանական ծագմամբ այլ նյութեր՝ ցանկացած տեսքով:</p> <p>Խոշոր եղջերավոր կենդանիներ-ներառում է կովեր, արտադրող ցուլեր, երինջներ, մոզիներ և այլն:</p> <p>Կովեր-առնվազն մեկ անգամ ծնած տավարի բոլոր ցեղերի սեռահասուն էգ կենդանի:</p> <p>Կովեր կաթնային հոտի-կաթ ստանալու համար բուծվող կովեր:</p> <p>Արտադրող ցուլեր-1,5 տարեկանից բարձր տավարի արու կենդանիներ, որոնք նախատեսված են վերարտադրություն ապահովելու համար:</p> <p>Երինջներ 2 տարեկանից բարձր- հղի էգ հորթեր՝ 2 տարեկանից բարձր:</p> <p>Մոզիներ 1-ից մինչև 2 տարեկան-տավարի 1-ից մինչև 2 տարեկան հորթեր:</p> <p>Գոմեշներ- ներառում է մատակներ, գոմշացուլեր և այլն:</p> <p>Մատակներ-գոմեշի սեռահասուն էգ կենդանի:</p> <p>Գոմշացուլեր- գոմեշի սեռահասուն արու կենդանի, որն օգտագործվում է վերարտադրության նպատակով:</p> <p>Խոզեր- ներառում է մայր խոզեր և այլն:</p> <p>Մայր խոզեր հիմնական հոտի- 2 և ավելի անգամ ծնած մայրեր:</p> <p>Ոչխարներ - ներառում է մաքիներ, խոյեր, շիշակներ և այլն:</p> <p>Մաքիներ - շիշակներ, որոնք ծնել են և դարձել մայր:</p> <p>Խոյեր- 1,5 տարեկանից բարձր արու ոչխարներ, որոնք օգտագործվում են վերարտադրության նպատակով:</p> <p>Շիշակներ - 1-1,5 տարեկան հղի էգ գառներ:</p> <p>Այծեր - ներառում է մայր այծեր, նոխազներ, ներիններ և այլն:</p> <p>Մայր այծեր - ներիններ (շիշակներ), որոնք ծնել են և դարձել մայր:</p> <p>Նոխազներ- արու այծեր, որոնք ծածկում են մայրերին վերարտադրության նպատակով:</p> <p>Ներիններ (շիշակներ) - 1-1,5 տարեկան հղի էգ այծեր:</p> <p>Ձիեր - ներառում է գամբիկներ, հովատակներ, մտրուկներ և այլն:</p> <p>Զամբիկներ 3 տարեկան և ավելի- վերարտադրության համար պիտանի էգ ձիեր:</p> <p>Հովատակներ- սեռահասուն արու ձիեր, որոնց օգտագործում են վերարտադրության նպատակով:</p> <p>Մտրուկներ - 1 տարեկան մատղաշ քուռակ՝ էգ կամ արու:</p> <p>Ձկնաբուծություն- ձկնամեղիորատիվ աշխատանքների իրականացում, ձկների, նորածին մանրաձկների, մանր ծովախեցգետինների, ջրիմուռների և ուրիշ ուտելի ծովաբույսերի արտադրություն և տվյալ գործունեության հետ կապված ծառայություններ:</p> <p>Գյուղատնտեսական նշանակության- շենքեր ու շինություններ ներառում է պահեստարաններ, ծածկեր, սառնարաններ, շինություն խոշոր եղջերավոր կենդանիների համար, խոզանոցներ,</p>
--	--	--

		<p>ոչխարանոցներ, թռչանոցներ:</p> <p>Պահեստարան- գյուղատնտեսական արտադրանք պահպանելու համար նախատեսված համապատասխան պայմաններ ունեցող (խոնավություն, ջերմություն, լուսավորություն և այլն) տարածք կամ շինություն:</p> <p>Ծածկ- տարածք, որն ունի վերին ծածկույթ, իսկ կողային հատվածները կարող են առանձնացված լինել ցանկացած նյութով, բացառելով փայտ և քար:</p> <p>Սառնարան - գյուղատնտեսական արտադրանք պահպանելու համար նախատեսված համապատասխան սարքավորումներով կահավորված տարածք կամ շինություն՝ անհրաժեշտ (ըստ պահանջի) ջերմաստիճան ապահովելու հնարավորությամբ:</p> <p>Շինություն խոշոր եղջերավոր- կենդանիների համար - խոշոր եղջերավոր (ցանկացած տեսակի և տարիքի) գյուղատնտեսական կենդանիներ պահելու համար նախատեսված շինություն:</p> <p>Խոզանոցներ- խոզեր (ցանկացած տեսակի և տարիքի) պահելու համար նախատեսված շինություն:</p> <p>Ոչխարանոցներ- ոչխարներ (ցանկացած տեսակի և տարիքի) պահելու համար նախատեսված շինություն:</p> <p>Թռչանոցներ - թռչուններ (ցանկացած տեսակի և տարիքի) պահելու համար նախատեսված շինություն:</p> <p>Գյուղատնտեսական տեխնիկա/սարքավորում - գյուղատնտեսական աշխատանքներ՝ վար, ցանք, կուլտիվացիա, բերքահավաք, գյուղատնտեսական բեռների փոխադրում, բույսերի բուժում, փոշոտում, վերամշակում և այլն, իրականացնելու համար տեխնիկա և սարքավորումներ:</p> <p>Սարքին գյուղատնտեսական տեխնիկա/սարքավորում- տեխնիկա /սարքավորում, որը գտնվում է աշխատունակ վիճակում, կամ առկա անսարքությունը կապված չէ հիմնական հանգույցների հետ՝ շարժիչ, փոխանցման տուփ, առջևի և հետևի կամրջակներ ու այլ անսարքություններ, որոնց վերացումը պահանջում է հանգույցների փոխանակում կամ նորոգում, և հնարավոր է վերացնել կարճ ժամկետում և չնչին ներդրումներով:</p> <p>Գյուղատնտեսական հումքի և արտադրանքի վերամշակում- տեխնոլոգիական գործընթաց (եփում, չորացում, ապխտում, թթվեցում, խմորում, թորում, հնացում, պահածոյացում և այլն), որի արդյունքում գյուղատնտեսական հումքի և արտադրանքի ֆիզիկական և (կամ) քիմիական կազմը զգալիորեն փոփոխվում է:</p> <p>Ազրոտորիզմ - զբոսաշրջության տեսակ գյուղական վայրերում, որը ենթադրում է և թույլ է տալիս այցելուներին, զբոսաշրջիկներին, հատկապես՝ քաղաքաբնակներին գիտելիքներ ձեռք բերել գյուղատնտեսության վարման մասին, ծանոթանալ գյուղատնտեսական արտադրանքի արտադրությանը (հնարավորություն ընձեռելով ցանկության դեպքում անմիջական</p>
--	--	--

		<p>մասնակցություն ունենալ հողի մշակման, ոռոգման աշխատանքներին, բերքահավաքին և այլն), ճաշակել բնական թարմ և առողջարար սննդամթերք, ինչպես նաև ծանոթանալ գյուղական միջավայրը բնորոշող ոչ սովորական ժամանցի ձևերին և օգտվել դրանցից:</p> <p>Ներտնտեսային հաշվառում- տնտեսության կողմից գյուղատնտեսության (ինչպես ամբողջությամբ, այնպես էլ դրա մի հատվածի) վարման վերաբերյալ կատարված ցանկացած տիպի հաշվառման իրականացում:</p>
2. Ժամանակայնություն		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Համապատասխան ԳՀՀ հարցաթերթերում ընդգրկված բաժիններում նշված ժամանակահատվածներին:
2.2	Հրապարակման ամսաթիվը	Համաձայն ԳՀՀ ժամանակացույցի: ՀՀ-ում 2014թ. իրականացված ԳՀՀ արդյունքները հրապարակվել և հանրությանն են ներկայացվել 2016թ. դեկտեմբերի 23-ին:
2.3	Ճշտապահություն	Համաձայն ԳՀՀ ժամանակացույցի:
2.4	Հաճախականությունը	Տաս տարի մեկ անգամ:
3. Ճշգրտություն		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	Հաշվառման արդյունքները ներկայացուցչական են երկրի, գյուղ/քաղաք, ք.Երևանի և մարզերի մակարդակներով:
3.2	Անճշտության աղբյուրները	Տեղեկատվությունը հավաքվում է համատարած, տասը տարին մեկ անգամ:
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	<p>ԳՀՀ անց է կացվել ՀՀ ողջ տարածքում՝ բոլոր համայնքներում: Տվյալների հավաքումն իրականացվել է համատարած և ընտրանքային եղանակներով.</p> <ul style="list-style-type: none"> -գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը և խմբային տնտեսությունները - համատարած, հարցաթերթի ինքնուրույն լրացում, -անհատական (գյուղացիական) տնային տնտեսություններ - համատարած, հարցաթերթի լրացում հաշվարարների կողմից հարցման միջոցով, -այգեգործական ընկերությունների անդամների և գյուղատնտեսությամբ զբաղվող քաղաքաբնակների անհատական տնտեսություններ - ընտրանքային, հարցաթերթի լրացում հաշվարարների կողմից հարցման միջոցով: <p>Հաշվառման արդյունքները ներկայացուցչական են երկրի, գյուղ/քաղաք, ք.Երևանի, մարզերի և համայնքների կտրվածքով:</p>
4. Համադրելիություն		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Հայաստանի Հանրապետությունում ԳՀՀ անցկացվել է առաջին անգամ 2014 թվականի հոկտեմբերի 11-31-ը ներառյալ:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Ընթացիկ վիճակագրությամբ հավաքվող համանման ցուցանիշների հետ:
4.3	Նախնական և	ԳՀՀ իրականացման արդյունքում հավաքված տվյալները/

	վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	ցուցանիշները նախնական հրապարակումից հետո կարող են ենթարկվել ճշգրտման: Հրապարակված տվյալների փոփոխություններն ուղեկցվում են բացատրական ծանոթագրություններով:
5. Մասշեղիություն		
5.1	Տարածման ձևաչափ	Հրապարակումներ «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի Գյուղատնտեսական համատարած հաշվառման» հիմնական արդյունքները վիճակագրական ժողովածու (հայերեն, անգլերեն և ռուսերեն) Ինտերնետային հասցե Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն, ռուսերեն և անգլերեն հետևյալ հասցեով. http://armstat.am/am/?nid=82&id=1860
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	Հավաքվող վիճակագրական տվյալները պահպանվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով:
5.3	Այլ տեղեկատվություն	Ցուցանիշների հրապարակումն ուղեկցվում է մեթոդաբանության նկարագրությամբ, որն առավել մանրամասն ներկայացված է «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի Գյուղատնտեսական համատարած հաշվառման» հիմնական արդյունքները վիճակագրական ժողովածուում (հայերեն, անգլերեն և ռուսերեն) http://armstat.am/am/?nid=82&id=1860
6. Լրացուցիչ փաստաթղթավորում		
6.1		Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ https://www.armstat.am/am/?nid=373 :